



Ծրագիրը ֆինանսավորվում է
Եվրոպական Միության կողմից



ԸՆՏԱՆԻՔԻ ԿԵՆՍԱՄԱԿԱՐԴԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՆՊԱՍՆԵՐ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

«ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳՑՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՄ» ԾՐԱԳԻՐ, ENPI/2013/334643

ՄՈՒՇԵՂ ԹՈՒՄԱՍՅԱՆ,
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ (EDRC)
ՄԱՅԻՍ 6, 2016, ԵՐԵՎԱՆ

1

ԸՆՏԱՆԻՔԻ ԿԵՆՍԱՄԱԿԱՐԴԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՆՊԱՍՆԵՐ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

- ՆԱԽԱՋԵՌՆՈՒԹՅՈՒՆԸ
- ԸԿՔՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳԻՐԸ
- ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍՑԵԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ
- ԾՐԱԳՐԻ ԸՆԿԱԼՈՒՄԸ ԵՎ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ԳՈՀՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
- ԱՆԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՆԱՋԵՎԸ
- ԾՐԱԳՐԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՄՈՆԻՏՈՐԻՆԳ
- ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

2

ԾՐԱԳԻՐԸ ԵՎ ԿԻՐԱՌՎԱԾ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

3

ՆԱԽԱՁԵՐՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական Միության կողմից:

Ծրագիրն իրականացվում է ՕՔՍՖԱՄԻ հետ համատեղ:

ՏՀՀԿ-ն Ծրագրի շրջանակներում իրականացնում է.

- գյուղատնտեսության, առողջապահության և սոցիալական պաշտպանության ոլորտների պետական բյուջեների պարզեցումներ,
- Քաղաքականությունների շրջանակների վերլուծություններ,
- Ընտրված բյուջետային ծրագրերի մոնիտորինգ և գնահատում,
- ՔՀԿ-ների բյուջետային գրագիտության և վերլուծական կարողությունների բարձրացմանն ուղղված միջոցառումներ:

4

ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ընտրված բյուջետային ծրագրերն են.

1. **Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ ծրագիր**
2. Տնային պայմաններում միայնակ տարեցների սոցիալական սպասարկում (ներառյալ ՀՀ մարզերում միայնակ տարեցների սոցիալական սպասարկում ծրագիրը)
3. **Սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկվածներին բժշկական օգնության ծառայություններ**
4. Բնակչության առողջության առաջնային պահպանման ծառայություններ
5. Գյուղական խորհրդատվական ծառայություններ
6. Պետական աջակցություն գյուղատնտեսական հողօգտագործողներին

5

ԿԻՐԱՌՎԱԾ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Քանակական և որակական հետազոտական մեթոդներ.

- Քաղաքականության փաստաթղթերի ուսումնասիրություն,
- Հարակից ուսումնասիրությունների և փաստաթղթերի ուսումնասիրություն,
- Հիմնական տեղեկացված անձանց հետ հարցազրույցներ,
- Շահառուների և ծառայություն մատուցողների ուսումնասիրություն և հարցազրույցներ,
- Վարչական, պաշտոնական տվյալների վերլուծություն,
- Վիճակագրական ընտրանքային հետազոտություններ:

6

ՔԱՆԱԿԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՏՁՀԿ, ՏՏ ԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՎԻՃԱԿ. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ-2015թ.

- Տնային տնտեսությունների դեմ առ դեմ, հարցաթերթի հիման վրա հետազոտություն.
- Ստրատիֆիկացված, բազմափուլ, պատահական ընտրանքի մոդել.
- «Ընդհանուր բնակչության» (ՀՀ բոլոր ՏՏ-ներ) և «Թիրախային բնակչություն» (ԸՆՀ Նպաստառուներ) առանձնացված ուսումնասիրություն.
- Ընտրանքի ծավալը յուրաքանչյուր կլաստերում՝ 2300 ՏՏ.

ՀՀ ԱԿԾ, ԿԵՆՍԱՄԱԿԱՐԴԱԿԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԲԱԶԱ 2014թ.

7

ԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՏՏԸՀ-2015-ի ընտրանքային համակցություն և սպասվող սխալ


Կլաստերներ	Ստրատաներ	Ընտրանք, ՏՏ	Ընտրանքի բաշխում	Սպասվող սխալ, %
Կլաստեր 1. «Ընդհանուր բնակչություն»	1.1 Երևան	852	0.37	+/-3.4
	1.2 Այլ քաղաքներ	690	0.30	+/-3.7
	1.3 Գյուղեր	758	0.33	+/-3.6
Ընդամենը		2,300	1.00	+/-2.0
Կլաստեր 2. «Թիրախային բնակչություն»	2.1 Երևան	400	0.17	+/-4.9
	2.2 Այլ քաղաքներ	980	0.43	+/-3.1
	2.3 Գյուղեր	920	0.40	+/-3.2
Ընդամենը		2,300	1.00	+/-2.0

Աղբյուր՝ ՏՁՀԿ

8

ԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Բնակչության կառուցվածքը. ՀՀ ԱՎԾ և ՏՁՀԿ տվյալների համադրում




Աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ և ՏՁՀԿ-2015

9

ԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Բնակչության տարիքային բուրգը. ՀՀ ԱՎԾ և ՏՁՀԿ տվյալների համադրում



Աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ և ՏՁՀԿ-2015

10

ԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

SS-ների աղքատության մակարդակի գնահատականների համադրում, տոկոս

	Ընդամենը, տոկոս բոլոր SS-ների նկատմամբ		Նպաստառու, տոկոս բոլորի նպաստառուների նկատմամբ	
	SSԿԱՀ, 2014	ՏԶՀԿ, 2015	SSԿԱՀ, 2014	ՏԶՀԿ, 2015
Աղքատ և ծայրահեղ աղքատ	25.9	33.2	45.2	56.2
Ծայրահեղ աղքատ	1.85	2.2	4.7	4.8
Շատ աղքատ	7.0	9.4	15.3	20.2
Աղքատ	16.97	21.6	25.2	31.3

Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ ՏՏԿԱՀ 2014թ. տվյալների բազա, ՏՏԸՀ-2015, ՏԶՀԿ հաշվարկներ և գնահատականներ

11

ԸՆՏԱՆԻՔԻ ԿԵՆՍԱՄԱԿԱՐԴԱԿԻ ԲԱՐՁՐԱՅՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՆՊԱՍՏՆԵՐԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

12

ԸՆՏԱՆԻՔԻ ԿԵՆՍԱՄԱԿԱՐԴԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՈՒՂԴՎԱԾ ՆՊԱՍՏՆԵՐ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

- ԸԿԲՆ ծրագիրը դրամական աջակցության (տրանսֆերտների) պետական ծրագիր է՝ հիմնված ՀՀ «Սոցիալական աջակցության» և «Պետական նպաստների» մասին օրենքների վրա:
- ԸԿԲՆ ծրագիրն ունի շուրջ 105 հազար շահառու ընտանիք, որը կազմում է Հայաստանի բոլոր ընտանիքների մոտ 14 տոկոսը:
- Շահառուներից շուրջ 80 հազարը երեխա ունեցող ընտանիքներ են, որոնց մոտ ¼-ը ունեն 3 և ավելի երեխաներ:
- Նպաստի միջին ամսական մեծությունը կազմում է՝ 30.5 հազար դրամ (նվազագույնը՝ 17 հազ., առավելագույնը՝ 55-70 հազ. դրամ)
- Բյուջեն կազմում է 38 մլրդ դրամ, ՍՊ բյուջեի 9.5 տոկոսը:
- Համակարգում հաշվառված է ընտանիքների 17 տոկոսը, մինչդեռ ՀՀ-ում աղքատության մակարդակը 30 տոկոս է, շատ աղքատությունը՝ 11 և ծայրահեղ աղքատությունը՝ 2.3 տոկոս:

13


ԸՆՏԱՆԻՔԻ ԿԵՆՍԱՄԱԿԱՐԴԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՈՒՂԴՎԱԾ ՆՊԱՍՏՆԵՐ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

- Հիմնված է «Փարոս» մարդասիրական օգնության ծրագրի վրա, սակայն ԸՆ բյուջետային ծրագիրը ներդրվել է 1999-ի բարեփոխումներից հետո:
- Նպաստները բաշխվում են հիմք ընդունելով ընտանիքի յուրաքանչյուր անդամի անապահովության միավորը, երեխաների քանակը, բնակավայրը և այլն:
- Տարբերակվում է նպաստի երեք տեսակներ՝ 1) ընտանեկան նպաստ, 2) սոցիալական նպաստ և 3) հրատապ օգնություն:
- Ընտանքի անապահովության գնահատման համար կան 11 ցուցանիշներ:
- Նպաստի իրավունք ունեն 30.00 ԸԱ միավորը գերազանցող բոլոր ընտանիքները:

14

ԸՆՏԱՆԻՔԻ ԿԵՆՍԱՄԱԿԱՐԴԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՆՊԱՍՏՆԵՐ ԾՐԱԳԻՐ

ԸԿԲՆ ծրագրի ֆինանսավորման ծավալները և շահառուների քանակը



Աղբյուր՝ ՀՀ 2015-2016թթ. պետական բյուջեի օրենքներ, ՀՀ 2005-2014թթ. պետական բյուջեի կատարման հաշվետվություններ, * ՀՀ ԱՄՀՆ 2015 թվականի հաշվետվություն, ՏՀՀԿ հաշվարկներ

15

ԸՆՏԱՆԻՔԻ ԿԵՆՍԱՄԱԿԱՐԴԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՆՊԱՍՏՆԵՐ ԾՐԱԳԻՐ

Ծրագրի միջնաժամկետ և երկարաժամկետ ցուցանիշներ

	2016	2017	2018	2017	2021	2025
	Բյուջե	ՄԺԾԾ		ՀՀՈԾ		
Շահառու ընտանիքների թվաքանակ	104,685	104,685	104,685	104,685	89,221	65,883
Նպաստի միջին ամսական չափը, դրամ	30,538	30,538	30,538	56,099*	52,390*	106,600*
ԸԿԲՆ ծրագրի ֆինանսավորում, մլն. դրամ	38,362	38,362	38,362	37,125	56,099	84,271
ԸԿԲՆ ծրագրի ֆինանսավորում, ՀՆԱ-ի տոկոս	0.7	0.7	0.7	0.6	0.6	0.6
Նպաստառու ընտանիքների հարաբերակցությունն աղքատության ստորին շեմից ցած գտնվող ընտանիքներին, տոկոս	-	-	-	94.5	100	100

* Հաշվարկվել է հիմք ընդունելով բերված աճի ինդեքսները:
Աղբյուր՝ ՀՀ 2016-2018 ՄԺԾԾ, ՀՀ 2014-2025 ՀՀՈԾ, ՏՀՀԿ հաշվարկներ

16


ԾՐԱԳՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՍՑԵԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

17

ԾՐԱԳՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՍՑԵԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ՍՏ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Սոցիալական տրանսֆերտների ազդեցությունն աղքատության վրա

Աղքատության մակարդակի գնահատականներ, տոկոս




Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ ՏՏԿԱՀ, ՏԶՀԿ հաշվարկներ

18

**ԾՐԱԳՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՍՑԵԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ,
ՍՏ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԾԱՅՐԱՀԵՂ ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ՎՐԱ**

Սոցիալական տրանսֆերտների ազդեցությունը ծայրահեղ աղքատության վրա
Ծայրահեղ աղքատության մակարդակի գնահատականներ, տոկոս




Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ ՏՏԿԱՀ, ՏԶՀԿ հաշվարկներ

19

**ԾՐԱԳՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՍՑԵԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ,
ԸԿԲՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԾԱՅՐԱՀԵՂ ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ՎՐԱ**

ԸԿԲՆ ծրագրի ազդեցության դինամիկան 2012-2014 թվականներին, տոկոս




Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ ՏՏԿԱՀ, ՏԶՀԿ հաշվարկներ

20

**ԾՐԱԳՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՍՑԵԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.
ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԾԱՅՐԱՀԵՂ ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ՎՐԱ ԸՍՏ ՄԱՐԶԵՐԻ**


ԸԿԲՆ ծրագրի արդյունքում ծայրահեղ աղքատության կրճատումն ըստ մարզերի, 2014 թվականի տվյալներ, տոկոս



21

**ԾՐԱԳՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՍՑԵԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.
ԾԱՅՐԱՀԵՂ ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆԸ ԵՎ ՄԱՐԶԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ**


Մինչև Նպաստների վճարումը ծայրահեղ աղքատ ՏՏ-ների թվաքանակը և ԸԿԲՆ ծրագրի ֆինանսավորման պլանը



22

**ԾՐԱԳՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՍՑԵԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.
ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ՊԱԿԱՍՈՒՐԴ ԵՎ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԲՅՈՒՋԵ**

Աղքատության պակասորդների գնահատականները և սոցիալական պաշտպանության բյուջեն




* Սոցիալական պաշտպանության պետական բյուջեն է առանց կենսաթոշակների (աշխատանքային, սպայական անձնակազմի, զինծառայողների և նրանց ընտանիքների և ՀՀ օրենքներով նշանակված կենսաթոշակների):
Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ ՏՏԿԱՀ, ՀՀ ՊԲ, ՏՀՀԿ հաշվարկներ

23

**ԾՐԱԳՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՍՑԵԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.
ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԲՅՈՒՋԵ**

Ծայրահեղ աղքատների և շատ աղքատների համար պակասորդները և ԼԿԲՆ ծրագրի բյուջեն, միլիարդ դրամ




Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ ՏՏԿԱՀ, ՏՀՀԿ հաշվարկներ

24

**ԾՐԱԳՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՍՑԵԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ,
ՇԱՀՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԲՅՈՒՋԵ ԲԱՇԽՄԱՆ ՀԱՍՑԵԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**


ԸԿԲՆ ծրագրի շահառուների և բյուջեի բաշխումն ըստ քվանտիլային խմբերի



*Քվանտիլները բերվում են մինչև Նպաստների վճարումը
Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ ՏՏԿԱՀ, ՏՀՀԿ հաշվարկներ

25


**ԾՐԱԳՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՍՑԵԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ,
ԸՆԴԴՐԿՄԱՆ ԵՎ ՉԸՆԴԴՐԿՄԱՆ ՍԽԱԼԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ**



Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ ՏՏԿԱՀ տվյալների բազա, ՏՏԸՀ-2015, ՏՀՀԿ հաշվարկներ և գնահատականներ

26

ԾՐԱԳՐԻ ԱՁԴԵՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՍՑԵԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ. ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍԽԱԼԸ ԾԱՅՐԱՀԵՂ ԱՂՔԱՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ



Աղբյուրը՝ ՏՏԸՀ-2015, ՏՀՀԿ հաշվարկներ և գնահատականներ


27

ԾՐԱԳՐԻ ԸՆԿԱԼՈՒՄԸ ԵՎ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ԳՈՀՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

28

ԾՐԱԳՐԻ ԸՆԿԱԼՈՒՄԸ ԵՎ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ԳՈՇՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Տեղեկացվածությունը ԸԿԲՆ ծրագրի մասին, տոկոս




Աղբյուրը՝ ՏՏԸՀ-2015, ՏԶՀԿ


29

ԾՐԱԳՐԻ ԸՆԿԱԼՈՒՄԸ ԵՎ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ԳՈՇՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Նպաստառուները, որոնք նշել են, որ իրենցից պահանջվել է լրացուցիչ վճարումներ



Նպաստառուները, որոնք գիտեն իրենց ընտանիքի անապահովության միավորը




Աղբյուրը՝ ՏՏԸՀ-2015, ՏԶՀԿ

30

ԾՐԱԳՐԻ ԸՆԿԱԼՈՒՄԸ ԵՎ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ԳՈՇՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Նպաստառուների գոհունակությունը տարածքային կենտրոնների աշխատակիցների աշխատանքից, տոկոս



Աղբյուրը՝ ՏՏԸՀ-2015, ՏՁՀԿ

31

ԾՐԱԳՐԻ ԸՆԿԱԼՈՒՄԸ ԵՎ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ԳՈՇՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ընտանեկան նպաստների համակարգի վերաբերյալ տարբեր հարցադրումների գնահատականներ, տոկոս

	Վստահ են	Դեպքեր գիտեն	Լսել են	Ոչ	ԴՊ	Ընդամենը	
Նպաստում է ծուլությանը և անգործությանը	6.2	2.6	8.7	65.9	16.7	100	Բոլոր ՏՏ-ներ
Շատ դեպքերում օգտվում են ոչ աղքատ ընտանիքները	2.1	0.9	5.3	86.0	5.7	100	Նպաստառուներ
Կան շատ աղքատ ընտանիքներ, որոնք չեն օգտվում	11.6	11.2	37.5	16.3	23.5	100	ՏՏ-ներ
Մոկա են չարաշահումներ, կաշառակերության դեպքեր	7.5	6.4	36.6	25.0	24.5	100	Նպաստառուներ
Կան շատ աղքատ ընտանիքներ, որոնք չեն օգտվում	17.2	15.7	34.3	11.6	21.3	100	Բոլոր ՏՏ-ներ
Մոկա են չարաշահումներ, կաշառակերության դեպքեր	9.9	10.6	38.1	17.7	23.7	100	Նպաստառուներ
Մոկա են չարաշահումներ, կաշառակերության դեպքեր	10.5	3.9	25.0	23.8	36.9	100	Բոլոր ՏՏ-ներ
Մոկա են չարաշահումներ, կաշառակերության դեպքեր	5.0	2.8	18.2	38.0	36.1	100	Նպաստառուներ

Աղբյուրը՝ ՏՏԸՀ-2015, ՏՁՀԿ

32

ԱՆԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՆԱՁԵՎԸ

33

ԱՆԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՆԱՁԵՎԸ. ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Անապահովության գնահատման ցուցանիշները (11 ցուցանիշ).

- Առաջին խումբ. «աղքատածին գործոններ և ռիսկեր»

1.ԸԱ միջին միավորը՝ $P_{միջ}$

(յուրաքանչյուր անդամի անապահովության միավորի միջին թվաբանականը)

2.Ընտանիքում անաշխատունակների թիվը՝ $K_{ընտ}$ գործակից

$K_{ընտ} = 1.00 + 0.02 \times$ ընտանիքի անաշխատունակ անդամների թիվ

3.Ընտանիքի եկամուտի գործակից

- Երկրորդ խումբ՝ «Հավելումներ»

4. Բնակարանային պայմանների գործակիցը՝ $K_{բն}$,

5. Բնակավայրի գործակիցը՝ $K_{տ}$,

- Երկրորդ խումբ՝ «Սահմանափակումներ»

6 ցուցանիշներ՝ էլ.էներգիայի սպառում, ավրոմեքնայի առկայություն, գործարքներ, տեսուչի գնահատականներ և այլն:

34

ԱՆԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՆԱՁԵՎԸ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԽՄԲԵՐԸ ԵՎ ՄԻԱՎՈՐՆԵՐԸ

	Անապահովության միավորը	Ծածկագիրը
1 հաշմանդամության I խումբ ունեցող անձ	48	Հ11
2 հաշմանդամության II խումբ ունեցող անձ	39	Հ22
3 հաշմանդամության III խումբ ունեցող անձ	28	Հ33
4 հաշմանդամություն ունեցող երեխա	45	Հ44
5 երեխա՝ մինչև 5 տարեկան	35	Ա55
6 երեխա՝ 5-18 տարեկան	33	Ա66
7 միակողմանի ծնողազուրկ երեխա	43	Մ23
8 առանց ծնողական խնամքի մնացած երեխա	50	Ե56
9 միայնակ մոր երեխա	26	Մ45
10 ամուսնալուծված անձի երեխա	26	Ա34
11 ռուսնող՝ մինչև 23 տարեկան	22	Ս12
12 սովորող՝ 18տ. մինչև դպրոցն ավարտելու տարվա հունիս ամիսը	30	Ս22
13 իրի կին (12 շաբաթ և ավելի ժամկետով)	35	Հ00
14 գործազուրկ	22	Գ99
15 աշխատանքի չուկայում անմրցունակ անձ	28	Գ98
16 Կենսաթոշակառու	36	Կ88
17 միայնակ չաշխատող կենսաթոշակառու	37	Կ87
18 տարեց կենսաթոշակառու (75 տարեկան և բարձր)	39	Կ86
19 ընտանիքի բացակա կամ սոցիալական խումբ չունեցող անդամ	17	

Աղբյուրը՝ ՀՀ կառավարության 30.01.2014թ. N 145-Ն որոշում

35

ԱՆԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՆԱՁԵՎԸ ԵԿԱՄՏԻ ԳՈՐԾԱԿԻՑԸ

Դեպքեր	Մեկ շնչին ընկնող եկամտի մակարդակ	Կազմ գործակից	Նվազագույն միավորը մյուս գործոնների հաշվին
Դեպք 1	0	1.20	25.01
Դեպք 2	5,000	1.15	26.10
Դեպք 3	10,000	1.09	27.53
Դեպք 4	15,000	1.04	28.86
Դեպք 5	18,182	1.00	30.01
Դեպք 6	20,000	0.98	30.62
Դեպք 7	25,000	0.93	32.27
Դեպք 8	30,000	0.87	34.49
Դեպք 9	35,000	0.82	36.60
Դեպք 10	40,000	0.76	39.49
Դեպք 11	45,000	0.71	42.27
Դեպք 12	50,000	0.65	46.17
Դեպք 13	55,000	0.60	50.02
Դեպք 14	60,000	0.54	55.57
Դեպք 15	65,000	0.49	61.24
Դեպք 16	70,000	0.43	69.79
Դեպք 17	75,000	0.38	-
Դեպք 18	80,000	0.32	-
Դեպք 19	109,091	0.00	-

36

ԱՆԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՆԱՁԵՎԸ. ԵԿԱՄՏԻ ԳՈՐԾԱԿՑԻ ԱՌԱՋԱՐԿ

Առաջարկվող բանաձևը՝

$K_{եկ} = 1.2 - 0.02 / 2500 \times e$, երբ $e \leq 45,000$ դրամ

$K_{եկ} = 0$, երբ $e > 45,000$ դրամ, որտեղ e -ն՝ մեկ անդամի հաշվով ամսական եկամուտն է:

Առաջարկությունը ենթադրում է.

- 18182 դրամ սահմանկետը բարձրացնել 25000 դրամ,
- 25000 դրամից մինչև 0 դրամի դեպքում գործակիցը կաճի մինչև 20%,
- 25000 դրամից բարձր եկամտի դեպքում՝ աստիճանաբար կզսպի,
- 45000 դրամ և ավելի բարձր եկամտի դեպքում՝ կհավասարվի 0-ի:

37

ԱՆԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՆԱՁԵՎԸ. ԿՔՆ ԳՈՐԾԱԿՑԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

▪ Բնակարանային պայմանների գործակիցը՝ $K_{բն}$

	Բնակարանային պայմանները	Գործող	Առաջարկվող
1	աղետի հետևանքով տրամադրված տնակ	1.2	1.15
2	ոչ հիմնական (ժամանակավոր) շինություն, տնակ	1.06	1.1
3	վթարային (3-րդ և 4-րդ աստիճանի) բնակարան	1.05	1.03
4	հանրակացարանի չսեփականաշնորհված սենյակ	1.03	1.03
5	այլ՝ վարձակալությամբ կամ առանց դրա ընտանիքին չպատկանող բնակելի տարածություն, հյուրանոց, դպրոց, նկուղ, ավտոտնակ, որոշակի բնակության վայր չունենալը և այլն	1.02	1.02
6	սեփական առանձնատուն	1.0	1.0
7	բնակարան բազմաբնակարան շենքում	1.0	1.0

38

ԱՆԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՆԱՁԵՎԸ. ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԳՈՐԾԱԿԻՑԸ

■ Բնակավայրի գործակիցը՝ $K_{տ}$

(Տարբերակում է ըստ խոնային և սահմանամերձ բնակավայրերի մեծացնելով մուտքի հնարավորություն)

	Գյուղեր	Քաղաքներ	$K_{տ} = 1,03$	$K_{տ} = 1,05$	Ընդամենը
Արագածոտն	3	2	5	0	5
Արարատ	3	0	0	3	3
Արմավիր	15	0	12	3	15
Գեղարքունիք	6	5	6	5	11
Լոռի	28	8	8	28	36
Կոտայք	0	5	5	0	5
Շիրակ	20	3	16	7	23
Սյունիք	53	7	5	55	60
Վայոց ձոր	7	3	3	7	10
Տավուշ	47	0	4	43	47
Ընդամենը	182	33	64	151	215

■ Առաջարկվում է կատարել խորը վերլուծություններ և վերնայումներ

39


ԱՆԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՆԱՁԵՎԸ. ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ՄՊԱՌՄԱՆ ԳՈՐԾԱԿԻՑԸ

SS անդամների թիվը	Գործող սահմանաչափ			Առաջարկվող սահմանաչափ		
	SS էլեկտրգիայի ծախս, կՎտ/ժ	SS էլեկտրգիայի ծախսեր, դրամ		SS էլեկտրգիայի ծախսեր, կՎտ/ժ	SS էլեկտրգիայի ծախսեր, դրամ	
		Ըստ հին սակագների	Ըստ ընթացիկ սակագների		Ըստ հին սակագների	Ըստ ընթացիկ սակագների
1	156	6084	7644	124	4836	6076
2	208	8112	10192	156	6084	7644
3	260	10140	12740	189	7371	9261
4	312	12168	15288	221	8619	10829
5	364	14196	17836	254	9906	12446
6	416	16224	20384	286	11154	14014
7	468	18252	22932	319	12441	15631
8	520	20280	25480	351	13689	17199
9	572	22308	28028	384	14976	18816
10	624	24336	30576	416	16224	20384
11	676	26364	33124	449	17511	22001
12	728	28392	35672	481	18759	23569
13	780	30420	38220	514	20046	25186

40

ԱՆԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՆԱՁԵՎԸ.
ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ՍԱՀՄԱՆԱԶԱՓԵՐԻ ՎԵՐԱՆԱՅՈՒՄ

Առաջարկվող բանաձևը՝ $W = 1.3 \times (70 + 30 \times n)$,



41

ԱՆԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՆԱՁԵՎԸ.
ՄԾՏՄ գործունեությունը շատ կարևոր է

• Ընտանիքի սոցիալ-տնտեսական պայմանների վերաբերյալ տարածքային կենտրոնների եզրակացությունները շատ կարևոր են

42

ԾՐԱԳՐԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԸ

43

ԾՐԱԳՐԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԸ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՅՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Վերջնական արդյունքի ցուցանիշ

Աղքատության մակարդակի վրա ազդեցության ապահովում՝
Կենսամակարդակի բարձրացմանն ուղղված **Նպաստների իրավունք
ունեցող ընտանիքների թիվ**

Ուղղակի արդյունքների ցուցանիշներ

- Նպաստներ **ստացող ընտանիքների թիվը** (տարեկան),
- Նպաստներ ստացող ընտանիքների թիվը, որոնց մատուցվում է փոստային ծառայություններ (ամսական),
- Նպաստների նշանակման համար անհրաժեշտ ձևաթղթերի քանակը՝ հատ (ամսական):

Աղբյուրը՝ «Անապահով սոցիալական խմբերին աջակցության ծրագրի» անձնագիր

44

ԾՐԱԳՐԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԸ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

Վերջնական արդյունքի ցուցանիշ (տարբերակներ)

- ԸԿԲՆ ծրագրի արդյունքում ծայրահեղ և շատ աղքատության կրճատման տոկոս, միջին տարեկան տեմպը (վավերացման աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ ՏՏԿԱՀ)
- ԸԿԲՆ ծրագրում ընդգրկված ծայրահեղ և շատ աղքատ ընտանիքների տոկոս նման ընտանիքների ընդհանուր թվից (վավերացման աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ ՏՏԿԱՀ)

Ուղղակի արդյունքների ցուցանիշներ (տարբերակներ)

- ԸԿԲՆ ծրագրում ընդգրկված ծայրահեղ և, կամ **շատ աղքատ ընտանիքների քանակը**, հատ
- ԸԿԲՆ ծրագրում ընդգրկված **աղքատ երեխաների քանակ**, տոկոս երեխաների ընդհանուր թվից
- Նպաստի միջին մեծությունն աղքատության վերին գծի համեմատ, տոկոս

Աղբյուր՝ ՏՀՀԿ

45

ՀԻՄՆԱԿԱՆ ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆ

Ծրագիրը համապատասխանում է քաղաքականությունների գերակայություններին, հասարակության և շահառուների կարիքներին:

ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՁԵՌՔ ԲԵՐՈՒՄ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

105 հազար ընտանիք, 80 հազար երեխա ունեցող ընտանք ստացել են դրամական աջակցություն:

Ծրագրի իրականացումը հանգեցրել է երկրում 2 տոկոսով աղքատության և շուրջ կիսով չափ՝ ծայրահեղ աղքատության դրսևորման մեղմմանը (նախաձրագրայինի համեմատ):

Ծայրահեղ աղքատների 44 տոկոսը, շատ աղքատների 37 տոկոսը և բոլոր աղքատ ՏՏ-ների 27 տոկոսը ստացել են հասարակության աջակցությունը:

Ընդգրկված ընտանիքների 38 տոկոսը կին գլխավորով տնտեսություններ են, իսկ 16 տոկոսը՝ միայն կանանցից կազմված:

Ընդհանուր առմամբ, Ծրագիրն իրականացվում է շահառուների բավականին բարձր գոհունակության պայմաններում:

46

ՀԻՄՆԱԿԱՆ ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ

ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՁԵՌՔ ԲԵՐՈՒՄ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ (շարունակություն)

Տեղեկացվածության մակարդակը ցածր չէ, սակայն, բարելավման կարիք ունի: Այն, հատկապես ծայրահեղ աղքատների համար, համակարգում չհաշվառման պատճառներից է:

Համակարգում հաշվառված են SS-ների միայն 19 տոկոսը, որը շատ ցածր է:

Ծրագիրը հատուկ հասցեագրում է սոցիալապես խոցելի խմբերին, ինչպես նաև բազմազավակ ընտանիքներին՝ մեղմելով երկրում դեմոգրաֆիական անկումը:

Ընդգրկելով սահմանամերձ և բարձր լեռնային բնակավայրերը՝ Ծրագիրը նպաստում է երկրի տարածքային զարգացման խնդիրների թուլացմանը:

ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՆԵՐԴՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Ծագրի արդյունավետության մակարդակն էականորեն բարելավման կարիք ունի: Ներդրված ռեսուրսները կարող են առավել արդյունավետորեն փոխակերպվել սպասվող արդյունքների:

Շահառուների 75 տոկոսը շատ աղքատ չէ, իսկ 95 տոկոսը՝ ծայրահեղ աղքատ չէ: Մյուս կողմից, շատ աղքատների 63 տոկոսը և ծայրահեղ աղքատների 56 տոկոսը չի օգտվում ծրագրից:

47

ՀԻՄՆԱԿԱՆ ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ

ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՆԵՐԴՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ (շարունակություն)

Ըստ մարզերի ներդրվող ռեսուրսների (Նպաստառուների) և աղքատության ցուցանիշների միջև անհամապատասխանություն կա: Գեղարքունիքում և Լոռիում Նպաստառուների քանակը համեմատության մեջ ամենամեծն են: Մինչդեռ՝ ամենաշատ աղքատները և ծայրահեղ աղքատները Շիրակի մարզում են:

Տավուշի մարզը համեմատաբար առավել քիչ ռեսուրսներ ստացող մարզերի թվում է, մինչդեռ՝ Ծրագիրն այս մարզում ամենարդյունավետներից է:

Ներդրվող միջոցները շուրջ 4-5 անգամ գերազանցում են ծայրահեղ աղքատության հաղթահարման համար անհրաժեշտ քյուզեն: Այն լիովին բավարար է, որ գործնականում ծայրահեղ աղքատությունը Հայաստանում հաղթահարվի, իսկ շատ աղքատությունը՝ էականորեն կասեցվի:

ԸԱԳ համակարգը կիրառվում է ավելի քան 15 տարիներ և, չնայած ճշգրտումների, հնացել է:

Ծայրահեղ և շատ աղքատների ընդգրկման աճը գործնականում հնարավոր է «ընդգրկման սխալի» կրճատման պարագայում: Դա ռեսուրս կհանդիսանան և Նպաստների միջին մեծության բարձրացման համար:

Նպաստի միջին մեծությունն աղքատության գծի համեմատ շատ փոքր է (աղքատության վերին ընդհանուր գիծը մեկ շնչի հաշվով կազմում է մոտ 40 հազար դրամ, իսկ նպաստի միջին մեծությունն ամբողջ ընտանիքի համար՝ 30 հազար դրամ):

48

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- 1) Հստակեցնել ԸԿԲՆ ծրագրի նպատակը՝ թիրախավորելով Հայաստանում ծայրահեղ աղքատության ամբողջական հաղթահարումը և շատ աղքատության էականորեն կասեցումը:
- 2) Համապատասխանաբար վերանայել նաև բյուջետային ծրագրի վերջնական արդյունքի և ուղղակի արդյունքի կատարողական ցուցանիշները:
- 3) Ապահովել ԸԿԲՆ ծրագրի վերջնական արդյունքի և ուղղակի արդյունքի ցուցանիշների կապը ՀԶՌԾ-ի նպատակադրումների հետ՝ երաշխավորել երկարաժամկետ ռազմավարությունների հետևողական իրականացումը:
- 4) ԸԿԲՆ ծրագրի իրականացման արդյունավետության վերաբերյալ իրականացնել մարզային կամ տարածքային համեմատական վերլուծություններ: Պարբերական քննության առարկա դարձնել ըստ մարզերի ֆինանսավորման, ծրագրային ձեռքբերումների և աղքատության ցուցանիշների համեմատականները:
- 5) Ըստ մարզերի և տարածքների սահմանել միջանկյալ կատարողական թիրախներ և ներդնել խրախուսման համակարգ:

49

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- 6) Բարձրացնել ՄԾՏՄ և սոցիալական աջակցության խորհուրդների աշխատանքների արդյունավետությունը՝ ներդնելով համապատասխան մեխանիզմներ և ընթացակարգեր, ընդլայնելով հեղինակավոր ՀԿ-ների դերը:
- 7) Լրացուցիչ ջանքեր ներդնել ծայրահեղ աղքատ և շատ աղքատ ընտանիքների բացահայտման, տեղեկացման և համակարգում ընդգրկման խոչընդոտների վերացման ուղղությամբ՝ օգտվելով տեղական ՀԿ-ների և շահերի պաշտպանությամբ զբաղվող կազմակերպությունների աջակցությունից:
- 8) ԸԿԲՆ ծրագրում ընդլայնել անկախ մոնիտորինգի և գնահատման դերը: Ստեղծել մեխանիզմներ հանրային վերահսկողության ներդրման համար: Ապահովել ԸԿԲՆ ծրագրի կատարման և առաջընթացի վերաբերյալ պարբերական հաշվետվությունների, ներքին ու արտաքին գնահատումների առավել լայն հասանելիություն:
- 9) Խորը և բազմակողմանի քննության առարկա դարձնել ընտանիքների անապահովության գնահատման համակարգը՝ նախապատրաստվելով արմատական փոփոխությունների:
- 10) Մինչ այդ ձեռնարկել համակարգի աստիճանական, փոփային վերանայումներ: Անապահովության գնահատման բանաձևում կատարել ճշգրտումներ:

50

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ



www.EDRC.am
info@edrc.am

51